ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

23 օգոստոսի երեքշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

116
(2596)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 74

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը 2018-ից ի վեր՝ իշխանության գալուց հետո, մի քանի անգամ է հրաժարական տվել ու ընտրվել: Այդ ընթացքում նա որեւէ անգամ չի լքել վարչապետի աթոռը՝ վարչապետին լիազորված բոլոր գործառույթները շարունակելով իրականացնել արդեն որպես գործադրի ղեկավարի պաշտոնակատար: 2018-ի իշխանափոխության օրերին (ապրիլի 25-ին), երբ դեռ նա ուսապարկով ու ձեռքը վիրակապած էր հարթակից ելույթ ունենում, հայտարարում էր. «Այն պահին, երբ գործող վարչապետ Սերժ Սարգսյանը հրաժարական է տվել, նրա հետ հրաժարական է տվել ամբողջ կառավարությունը: Այսօր կառավարությունում գործող ոչ մի պաշտոնյա չկա: Կառավարության բոլոր անդամները հրաժարական տված են համարվում»: Նույն օրն ու էլի նույն հարթակից ընդդիմադիր Փաշինյանը վստահեցնում էր, թե ՀՀ վարչապետի հրաժարականի պարագայում չի կարող վարչապետի պաշտոնակատար լինել: Վերոնշյալ հայտարարությունից ուղիղ երեք տարի անց (ի դեպ, նույն օրը՝ ապրիլի 25-ին) նույն Նիկոլ Փաշինյանը հերքում էր ինքն իրեն՝ ասելով, թե հրաժարական տալով վարչապետի պաշտոնից՝ այս ընթացքում շարունակելու է կատարել ՀՀ վարչապետի պարտականությունները՝ օրենսդրությամբ ու սահմանադրությամբ ենթադրվող ամբողջ ծավալով: Վարչապետի աթոռին անգամ մեկ րոպեով հրաժարական չտվող Փաշինյանը, փաստորեն, կառավարության կաբինետի ղեկավարի հրաժարականի մասին իրարամերժ հայտարարություններով հերթական անգամ ստել է:

«Ոչ մի րոպե դադար»,- ասում է արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Փամբուխչյանի օգնական Հայկ Ստեփանյանը՝ նկատի ունենալով «Սուրմալու» առեւտրի կենտրոնի պայթյունի հետեւանքով տեղում աշխատող փրկարարներին: Այս օրերին գերմարդկային ջանքեր գործադրող փրկարարների աշխատանքն իսկապես դրվատանքի է արժանի, անհասկանալի ու բավականին տգեղ է, սակայն, մարդկային ողբերության ֆոնին ինքնագովազդվող չինովնիկների վարքագիծը: Նրացից մեկն էլ հենց նախարարի օգնական Ստեփանյանն է, որ «Սուրմալու» առեւտրի կենտրոնի փլատակների ու փոշու մեջ, չգիտես՝ ինչպես, փայփլուն կոշիկներով, հարդարված մազերով ու չփոշոտված հագուկապով էր միշտ երեւում տեսախցիկների ու ֆոտոխցիկների առջեւ: «Հեղափոխության պահապանների» գլխավոր հերոսը, որ որոշ ժամանակ առաջ ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի օգնականն էր, այժմ էլ, փաստորեն, Արմեն Փամբուխչյանին է օգնում գուցե փլատակների ֆոնին ճիշտ հագուստ ու կոշիկներ ընտրելու հարցում: Արտակարգ իրավիճակների նախարարի օգնականը փաստացի մի անձ է, որ այժմ՝ հենց այս պահին, խմբակային ծեծկռտուքի մասնակից լինելու համար դատական գործով է անցնում: Այդ հանգամանքը, փաստորեն, բնավ չի կաշկանդում նախարար Փամբուխչյանին իրեն օգնական նշանակել մի անձի, որ, բացի ներկա դատական գործը, մինչեւ դա էլ լրատվամիջոցի վրա ձվային հարձակում իրականացնելու համար էր որպես մեղադրյալ ներգրավված: Բայց եթե «Ազատություն» ռ/կ-ի վրա «հարձակում իրականացնելու» համար դաշնակցական Գերասիմ Վարդանյանն այժմ կալանավորված է, ապա «պահապան» օգնականը «Հայելի» ակումբի վրա հարձակում իրականացնելուց հետո ոչ միայն չի կալանավորվել, այլեւ իշխանության բարձրագույն դափնիների է արժանացել, պաշտոն ստացել ու սկսել հիացական լուսանկարներ հրապարակել իր աշխատասենյակից, ԱԻՆ աշխատաժողովներից ու, որ ամենանողկալին է, խրոխտ կեցվածքով՝ փլատակների վրայից: Արմեն Փամբուխչյանը Հայկ Ստեփանյանին տաքուկ աթոռ շորհելիս գուցե տեղյակ չի եղել, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանն է անգամ ժամանակին քննադատել արկածախնդիր երիտասարդի վարքագիծը:

«Սուրմալու» առեւտրի կենտրոնի աղետից անցել է 9 օր: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ առեւտրի կենտրոնում պայթյունի գործով իրավապահները մի քանի կասկածներ ունեն: Վարկածներից մեկն այն է, որ միգուցե առեւտրի կենտրոնում ապօրինի արտադրամաս է եղել, որը առնչվել է ոչ միայն հրավառ նյութերի, այլ հենց պայթուցիկ նյութերի հետ: Նշենք, որ օգոստոսի 14-ին «Սուրմալու» առեւտրի կենտրոնում տեղի ունեցած պայթյունի դեպքով քրեական վարույթ է նախաձեռնվել, որի շրջանակներում բազմաթիվ տնտեսվարողներ են հարցաքննվել որպես տուժող: Մեզ հասած լուրերի համաձայն՝ այս օրերին քննվում է այն վարկածը, որ պայթած շենքի նկուղային հարկում եղել է հրավառ նյութերի պատրաստման արտադրամաս պայթուցիկ այլ նյութերի համակցմամբ, եւ իրավապահները ակտիվ քննում են այդ վարկածը: Ի դեպ, չի բացառվում, որ քրեական վարույթով անգամ հարցաքննված տնտեսվարողները նման տեղեկություն հայտնած լինեն իրավապահներին: Տեղեկության վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց ՀՀ քննչական կոմիտեի լրատվական բաժին, որտեղից ի պատասխան՝ հայտնեցին. «Փորձագետների մասնակցությամբ իրականացվում է դեպքի վայրի զննություն, քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է»: Հավելենք, որ առեւտրի կենտրոնի պայթյունի հետեւանքով կա 16 զոհ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը դեռ քննարկումների մեջ է, թե ում են նշանակելու նոր ձեւավորվելիք ներքին գործերի նախարար: Ինչպես հայտնի է, Ոստիկանությունը եւ Արտակարգ իրավիճակների նախարարությունը միավորվելով ստեղծվելու է Ներքին գործերի նախարարություն: Այս կառույցի ստեղծման մասին դեռ խոսակցություններից ի վեր այդ պաշտոնի համար տարբեր անուններ են շրջանառվել, այդ թվում՝ շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանի անունը, սակայն իշխող թիմում կարծես թե հակված են այլ որոշում կայացնելու, քանի որ Հակոբ Սիմիդյանի աշխատանքից դժգոհ են, եւ նոր բացահայտումներ են եղել: Առաջիկայում այդ մասով «Ժողովուրդ» օրաթերթը մանրամասներ կներկայացնի: Եվ, ահա, մեր տեղեկություններով՝ այժմ իշխանությունները որպես ներքին գործերի նախարար են տեսնում ՀՀ ոստիկանապետ Վահե Ղազարյանին: Թեեւ նա հրապարակային կերպար չէ, եւ դժվար է պատկերացնել, թե ինչպես է ԱԺ-Կառավարություն հարցուպատասխանի ժամանակ ամբիոնից խոսելու, այնուամենայնիվ այս պահին ՔՊ թիմում քննարկումները Ղազարյանի ուղղությամբ են: ՀՀ ոստիկանապետի պաշտոնը թերեւս կզբաղեցնի Վահե Ղազարյանի առաջին տեղակալը՝ Արամ Հովհաննիսյանը: Վերջնական որոշում, սակայն, դեռ չկա:

ԿՄԱՍՆԱԿՑԵՆՔ

ՀԵՌԱՑՈՒՄԸ ՓՐԿԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանին իշխանությունից զրկելու 3 ճանապարհ կա՝ վստահեցնում է Լեհաստանում Հայաստանի նախկին դեսպան Էդգար Ղազարյանն ու մանրամասնում՝ առաջինը Փաշինյանի գիտակցված հրաժարականն է, երկրորդը իրավական ճանապարհն է, երրորդն Ազգային ժողովի 1/3-ի կողմից վարչապետին անվստահություն հայտնելու նախաձեռնությունն է: Ղազարյանի ազդարարած նոր շարժումը՝ «Անկախության շարժումը» մեկնարկելու է 2022 թվականի օգոստոսի 23-ին՝ Հայաստանի անկախության հռչակագրի ընդունման օրը եւ, ըստ նրա, պետք է ավարտվի սեպտեմբերի 21-ին՝ ՀՀ անկախության օրը, Փաշինյանի հրաժարականով: Քաղաքական դաշտի ընդդիմադիր հատվածի մեծ մասը պատրաստ է կանգնել նոր շարժման կողքին: Խորհրդարանական «Հայաստան» խմբակցության պատգամավորները նույնպես հրապարակում կլինեն, իսկ եղած դեպքում քննարկումներ կունենան Ղազարյանի հետ, կօժանդակեն շարժմանը: «Մինչեւ այս պահը,- ArmLur.am-ի հետ զրույցում ասում է «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանը,- Ղազարյանի հետ հանդիպում-քննարկում չեն ունեցել»:

-Պարոն Մանուկյան, այսօր վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրաժարականի պահանջով հերթական շարժումն է սկսում: Խոսքը Լեհաստանում ՀՀ նախկին դեսպան Էդգար Ղազարյանի նախաձեռնած շարժման մասին է: Ի՞նչ տրամադրվածություններ ունի «Հայաստան» խմբակցությունը:

-Մենք միշտ էլ հայտարարել ենք, որ ընդդիմադիր ցանկացած գործողություն, որը նպատակադրել է այս իշխանության հեռացումը, բնականաբար ստանալու է մեր աջակցությունը: Ինչպես նախորդ շարժումների դեպքում, այնպես էլ այս անգամ, մեր գործընկերները, զինակիցները լինելու են Հանրապետության հրապարակում:

-Այդ օրը Դուք լինելո՞ւ եք Հանրապետության հրապարակում:

-Այո, անշուշտ:

-Այս դեպքում որպես մասնակի՞ց, թե՞ անհրաժեշտության դեպքում կօգնեք խորհուրդներով:

-Որպես մասնակից կլինեմ:

-Պարոն Մանուկյան, Էդգար Ղազարյանը հայտարարել էր նաեւ, որ նախաձեռնության հիմքում Գերագույն խորհրդի պատգամավորների հետ հանդիպում-քննարկման ձեւաչափն ու գաղափարն է: Ձեր շրջապատում եղե՞լ են մարդիկ, որ հանդիպել են նրա հետ:

-Որպես ԱԺ պատգամավոր՝ թե՛ ես, թե՛ մյուս բոլոր պատգամավորները պաշտոնապես հրավիրված ենք խորհրդի անդամների հետ այդ հանդիպում-քննարկմանը:

-Ղազարյանի հետ մինչեւ այսօրվա (երեկվա-խմբ.) քննարկումը հանդիպում չե՞ք ունեցել:

-Ոչ, չենք հանդիպել:

-Պարոն Մանուկյան, հիմա քաղաքագետները եւ հասարակության մի ստվար զանգված ասում են, որ ընդդիմությունն արդեն 2 անգամ չկարողացավ այնպես անել, որ Նիկոլ Փաշինյանը հեռանա, հետեւաբար, ասում են, մեկ մարդ ինչպե՞ս է կարողանալու կարճ ժամկետում՝ մի ամսում այնպես անել, որ Փաշինյանը հրաժարական տա: Ձեր տեսակետը ո՞րն է:

-Ես չակերտավոր քաղաքագետներին ընդհանրապես սովորություն չունեմ խորհուրդ տալու եւ մեկնաբանելու, քանի որ իմ ժամանակը եւ շատ շատերի ժամանակը շատ թանկ է նման մեկնաբանությունների համար:

-Ցանկանում եք ասել, որ հույս ունեք՝ այս անգամ կգնա՞:

-Նիկոլ Փաշինյանը վաղ թե ուշ հեռացվելու է. այդ հարցում վստահ եմ:

-Արդեն 2 տարի նույն բանն եք ասում:

-Ցավոք սրտի, մեր երկրի ու մեր ժողովրդի դժբախտությունն էր, ոչ թե այս կամ այն քաղաքական ուժի հաջողությունը կամ անհաջողությունն է նրա՝ ամեն օր իշխանության մնալը, որը շատ է թուլացնում մեր երկիրը ու մեր երկրի անվտանգությունը:

-Ըստ Ձեզ՝ կա՞ն ժամկետներ:

-Ասեմ՝ օր առաջ նրա հեռացումը մեր երկիրը այս գահավիժող վիճակից փրկելու հնարավորություն է տալիս:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ԱՊՕՐԻՆԻ 10 ԿՐՊԱԿ

Երեւանի նախկին քաղաքապետը սկսել է կենդանության նշաններ ցույց տալ: «Սուրմալու» առեւտրի կենտրոնում օրեր առաջ տեղի ունեցած ուժգին պայթյունը նրան ստիպել է խոսել: Քաղաքապետը, անդրադառնալով պայթյունին, հայտարարել է. «Հույս ունեմ, որ ապագայում թե՛ պետական մարմինների եւ թե՛ քաղաքացիների կողմից կանխարգելիչ գործողությունները թույլ կտան խուսափել նմանատիպ ողբերգական միջադեպերից»: Եւ ո՞վ է խոսում կանխարգելիչ գործողություններից. մարդ, որը 2021 թվականի ապրիլի 6-ին՝նույն «Սուրմալու» առեւտրի կենտրոնում տեղի ունեցած հրդեհից հետո, որեւէ կանխարգելիչ գործողություն չի արել: Որպես քաղաքապետ՝ «Սուրմալու» ստուգայց չի կատարել՝ պարզելու հրդեհից հետո անվտանգության կանոնները պահպանվել են, թե ոչ: Հիմա եկել եւ քաղաքացիներին ու պետական կառույցներին կոչ է անում կանխարգելիչ գործողություն անել: ArmLur.am-ը տեղեկացավ, որ ապամոնտաժման դեմ պայքարող Հայկ Մարությանի պաշտոնավարման ժամանակ նույն «Սուրմալու» առեւտրի կենտրոնում ապօրինի բացվել է 10 կրպակ:

ՄԻԵԴ–Ի ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության մի շարք բնակավայրերի քաղաքացիական բնակչության իրավունքների պաշտպանության համար, Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ) ներկայացված միջանկյալ միջոց կիրառելու մասին պահանջի հիման վրա, սույն թվականի օգոստոսի 19-ին ՄԻԵԴ-ը վերահաստատել է 2020 թվականի սեպտեմբերի 29-ին կիրառված եւ նույն թվականի նոյեմբերի 3-ին առավել ընդլայնած միջանկյալ միջոցը՝ նշելով, որ այն շարունակում է ուժի մեջ մնալ: Ինչպես հաղորդում է «Արմենպրես»-ը, այս մասին հայտնում է Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի գրասենյակը: «ՄԻԵԴ-ը կողմերին հրավիրել է ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են հանգեցնել քաղաքացիական բնակչության Կոնվենցիայով պաշտպանվող իրավունքների խախտմանը, այդ թվում նրանց՝Կոնվենցիայի 2-րդ, 3-րդ եւ 8-րդ հոդվածներով պաշտպանվող իրավունքները վտանգի տակ դնելուց»,-նշված է հայտարարության մեջ: ՄԻԵԴ-ը նաեւ արձանագրել է, որ ՀՀ կառավարության վկայակոչած իրադարձությունների, այն է՝ խաղաղ բնակավայրերի ուղղությամբ իրականացվող զինված հարձակումների, Բերձոր եւ Աղավնո համայնքների բնակչության տեղահանման սպառնալիքների նկատմամբ կիրառելի է 2020 թվականի սեպտեմբերի 29-ի կայացված եւ մինչ օրս ուժի մեջ գտնվող որոշումը:

ԲՈՂՈՔԻ ՆՈՏԱ

ՌԴ–Ն ՍՊԱՍՈՒՄ Է ՊԱՏԱՍԽԱՆԻ

Հայաստանի արտգործնախարարությունը ստացել է Ռուսաստանի դեսպանատան հայտագիրը եւ կպատասխանի սահմանված կարգով: Այս մասին հայտնել է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի խոսնակ Վահան Հունանյանը:

Ինչպես հայտնի է, ՀՀ-ում ՌԴ դեսպանատունը Ռուսաստանի հասցեին արվող տեղեկատվական շահարկումների պատճառով բողոքի նոտա է հղել ՀՀ ԱԳՆ-ին: Դեսպանատան հայտարարության մեջ նշվում էր, որ վրդովված են տեղական տեղեկատվական տիրույթում շրջանառող ցինիկ շահարկումներից, որոնք անարգող եւ կեղծ մեղադրանքներ են պարունակում ռուսական կառույցների հասցեին օգոստոսի 14-ին «Սուրմալու» առեւտրի կենտրոնի տարածքում տեղի ունեցած ողբերգությանը մեղսակից լինելու մասին:

Հավելենք, որ ՌԴ ԱԳՆ տեղեկատվության եւ մամուլի դեպարտամենտի փոխտնօրեն Իվան Նեչաեւը հայտարարեց՝ Մոսկվան սպասում է պաշտոնական Երեւանի պատասխանին՝ կապված Հայաստանի ԱԳՆ-ին ուղղված բողոքի նոտայի հետ:

Իսկ ի՞նչ է արվում նման դեպքերում: Նախ՝ նշենք, որ նոտան դիվանագիտական նամակագրության փաստաթուղթ է, որի միջոցով մի պետության կառավարությունը արտաքին հարաբերությունների տարբեր հարցերի շուրջ դիմում է մեկ այլ պետության կառավարությանը, իսկ «բողոք» բառը նշանակում է դժգոհություն, առարկություն, անհամաձայնություն, հերքում, ժխտում եւ այլն: Չնայած այն հանգամանքին, որ դժգոհություն կամ մտահոգություն առաջացրած ցանկացած իրադարձություն կամ գործողություն կարող է հիմք դառնալ հայտարարության եւ բողոքի նոտա հանձնելու համար, դիվանագիտական կառույցները նման գործիքի են դիմում միայն լուրջ հիմքերի առկայության դեպքում:

«Բողոքի նոտա հղել» բառակապակցությունը շարքային քաղաքացու մոտ կարող է խորհրդավոր սարսափի զգացողություն առաջացնել, սակայն դա պարզապես ինչ-ինչ հարցերի վերաբերյալ դժգոհություն արտահայտելու դիվանագիտական պրակտիկայում ընդունված ձեւ է, այդ նոտան էլ ընդամենը հատուկ տիպային շարադրանք պարունակող պաշտոնական նամակ է իրենից ներկայացնում: Հետաքրքիր է նաեւ, որ բողոքի նոտային պատասխանելու հստակ ժամկետներ չկան, սակայն պատասխանը պետք է լինի գրավոր:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՌԱՆՑ ՀԱՄԱՐԱՆԻՇԻ

Օգոստոսի 15-ի առավոտյան վարչապետ Նիկոլ Փաշինյանն այցելեց «Սուրմալու» առեւտրի կենտրոն, որտեղ նախորդ օրը տեղի էր ունեցել պայթյուն՝ հրդեհի բռնկմամբ: Ինչպես երեւում է տարածված տեսանյութերից, վարչապետի ավտոշարասյան ամենագնացներից մեկի առջեւի մասում բացակայում է մեքենայի պետհամարանիշը, այնինչ նույն մեքենայի ետնամասում համարանիշը կա՝ 001 ՍՍ: Սա հենց այն մեքենան է, որը սպասարկում է անձամբ վարչապետին, եւ Նիկոլ Փաշինյանն իջնում է հենց այս մեքենայից: Փաստերի ստուգման հարթակը գրում է՝ ստացվում է՝ վարչապետը երթեւեկում է օրենքի կոպիտ խախտմամբ, քանի որ, ըստ «Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, տրանսպորտային միջոցի երթեւեկությունն արգելվում է, եթե վարորդը տրանսպորտային միջոցը վարում է կեղծ, փոխված կամ ստանդարտին չհամապատասխանող հաշվառման համարանիշով կամ առանց համարանիշների: Իսկ տրանսպորտային միջոցների համարանիշների հաշվառման եւ հատկացման կարգի համաձայն՝ թեթեւ մարդատար ավտոմոբիլներին հատկացվում են թվերի ու տառերի միեւնույն հավաքածուն պարունակող 2 (դիմացի ու հետին) համարանիշներ: Հետաքրքիր է, որ նախկինում վարչապետին տեղափոխող ավտոմեքենաների վրա հաշվառման համարանիշները մշտապես եղել են: ArmLur.am-ը եւս կադրեր է ֆիքսել, երբ վարչապետին տեղափոխող մեքենան կրում է հաշվառման համարանիշներ, այժմ, սակայն, նա երթեւեկում է օրենքի խախտմամբ:

ՆՈՐ ԱՆՑԱԿԵՏԵՐ

Արդեն երրորդ օրն է՝ իրավական ակտերի նախագծերի միասնական կայքում՝ e-draft.am-ում, քննարկման է դրվել հայ-ադրբեջանական երեք ավտոմոբիլային անցակետեր ստեղծելու նախագիծ, բայց Հայաստանի իշխանությունը մինչ այժմ չի պարզաբանել՝ արդյոք Ադրբեջանի հետ տրանսպորտային կապերի ապաշրջափակման վերջնական պայմանավորվածություններ են ձեռք բերվել: Եթե, ի վերջո, որոշում ընդունվի, հայ- ադրբեջանական երեք անցակետերից մեկը, Ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ) նախագծի համաձայն, շփման գծի անմիջապես հարեւանությամբ՝ Նախիջեւանին սահմանակից Երասխում կտեղադրվի: Բացի այդ, անցակետերը կտեղադրվեն Գեղարքունիքի մարզի Սոթք համայնքից դեպի պետական սահմանի M11 մայրուղի եւ Սյունիքի Քարահունջ համայնքից մոտ 7,5 կմ հարավ՝ M2 մայրուղու վրա՝ դեպի Ղուբաթլու: Պետական եկամուտների կոմիտեն (ՊԵԿ) էլ իր հերթին նույն այդ վայրերում նոր մաքսային կետեր ստեղծելու ու մաքսային հսկողության գոտիներ սահմանելու նախագծեր է շրջանառության մեջ դրել: Ուշագրավ է, որ արդեն երրորդ օրն է՝ խոսվում է այս նախագծերի մասին, սակայն ո՛չ սահմանազատում է իրականացվել, ո՛չ ապաշրջափակման պայմանավորվածության մասին հրապարակային հայտարարվել:

ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԴԵՍՊԱՆԸ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ Է Թ. ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Լաչինի միջանցքի շուրջ իրավիճակը պիտի լուծվի եռակողմ հայտարարության 6-րդ կետի հիման վրա. Հայաստանում Ռուսաստանի դեսպանատունն արձագանքել է իմ գրություններին

Ադրբեջանի հանցավոր վարքագծի շարունակական դրսեւորումների վերաբերյալ հետեւողականորեն ծանուցում եմ միջազգային գործընկերներիս, ՀՀ-ում հավատարմագրված դեսպաններին: Հերթական նամակով ՀՀ-ում ՌԴ դեսպան Սերգեյ Կոպիրկինի ուշադրությունն էի հրավիրել Արցախի վրա Ադրբեջանի հարձակման փաստի վրա, որը տեղի ունեցավ օգոստոսի 1-ին, երբ ադրբեջանական կողմը փորձեց հատել շփման գիծը՝ հաջորդող օրերին բացի տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից կիրառելով նաեւ ականանետեր, նռնականետեր եւ հարվածային ԱԹՍ-ներ: Քանի որ Ադրբեջանը հերթական անգամ խախտեց 2020թ. նոյեմբերի 10-ի եռակողմ հայտարարությունը, որի հետեւանքով ունեցանք զոհեր եւ վիրավորներ, ռուս գործընկերոջս խնդրել էի դատապարտել Ադրբեջանի այս հանցավոր վարքագիծը, քայլեր ձեռնարկել տարածաշրջանում իրավիճակի կայունացման ուղղությամբ:

ՀՀ-ում ՌԴ դեսպանատնից ստացել եմ գրություն, համաձայն որի՝ իրավիճակը ռուսական խաղաղապահ զորակազմը պատասխանատվության գոտում եւ հայ-ադրբեջանական սահմանին Ռուսաստանի արտաքին քաղաքականության համար կարեւոր հարց է: «Կցանկանայինք Ձեր ուշադրությունը հրավիրել Ռուսաստանի ԱԳՆ-ի՝ օգոստոսի 4-ի հայտարարությանը՝ Ղարաբաղյան հակամարտության գոտում սրման կապակցությամբ: Նախարարությունը կոչ արեց 2 կողմերին դրսեւորել զսպվածություն, պահպանել կրակի դադարեցման ռեժիմը եւ հաստատեց կարգավորման անհրաժեշտությունը՝ համապատասխան Ռուսաստանի, Ադրբեջանի եւ Հայաստանի առաջնորդների՝ 2020թ. նոյեմբերի 10-ի, 2021թ. հունվարի 11-ի եւ նոյեմբերի 26-ի հայտարարությունների: (…) Ռուս խաղաղապահները ձեռնարկում են բոլոր հնարավոր ջանքերը «ցամաքում» իրավիճակի կայունացման նպատակով: Եվ Բաքվում, եւ Երեւանում բազմիցս ընդգծվել է ռուսական խաղաղապահ կոնտինգենտի կարեւոր դերը: Համոզված են, որ այդ վստահությանը լիարժեքորեն արժանի են: Պատրաստ ենք հետայսու եւս ցուցաբերել ցանկացած անհրաժեշտ աջակցություն Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կապերի կարգավորմանը»,- նշվում է դեսպանատան արձագանքում:

Մեկ այլ գրությամբ Ռուսաստանի Դաշնության գործընկերներիս ուշադրությունն էի հրավիրել Բերձոր, Աղավնո եւ Ներքին Սուս բնակավայրերի հանձնման գործընթացի վրա: Հաշված օրեր են մնացել, որ հայկական բնակավայրերը հանձնվեն Ադրբեջանին: Եվ որքան մոտենում ենք Նիկոլ Փաշինյանի իշխանության կողմից համայն հայությանը պարտադրված այս ամոթալի իրականությանը, ապագայի տեսլականն էլ ավելի անորոշ է դառնում: Իմ նամակով ՀՀ-ում ՌԴ դեսպան Սերգեյ Կոպիրկինին ներկայացրել էի առկա դժվարությունները, ինչպես նաեւ Արցախի ԱԺ պատգամավոր գործընկերներիս մտահոգությունները, որ մարդկային, տեխնիկական եւ տրանսպորտային ռեսուրսները բավարար չեն տարհանման գործընթացի ժամանակին իրականացման համար: Խնդրել էի օժանդակել նշված բնակավայրերի հանձնման ժամկետի երկարաձգման հարցում:

ՌԴ դեսպանատունը պատասխան գրությամբ հայտնում է, որ Լաչինի միջանցքի շուրջ իրավիճակը պիտի լուծվի եռակողմ հայտարարության 6-րդ կետի հիման վրա: Հիշեցնեմ՝ ՌԴ դեսպանատան մատնանշած 6-րդ կետի համաձայն՝ Կողմերի համաձայնությամբ Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի միջեւ կապն ապահովելու համար առաջիկա երեք տարիների ընթացքում պիտի հաստատվի Լաչինի միջանցքի երկայնքով նոր երթուղու կառուցման նախագիծ, որից հետո ռուսական խաղաղապահ զորակազմը կվերատեղակայվի այդ երթուղին պաշտպանելու համար: Դատելով նաեւ օրերս Երեւանում Ռուսաստանի դեսպանության խորհրդական-դեսպանորդ Մաքսիմ Սելեզնյովի հայտարարությունից, որ «ռուս խաղաղապահները ոչ մի սանտիմետր չեն տեղաշարժվի Լաչինի գործող միջանցքից, քանի դեռ նոր ճանապարհը չի շահագործվել», կարելի է ենթադրել, որ այս մասով եւս դեռ ամեն ինչ հստակ չէ. ի վերջո նշված 3 տարվա ժամկետի ավարտին դեռ ավելի քան 1 տարի էլ մնացել է:

ՌԴ դեսպանատնից հավելում են, որ իրենց գրությամբ նշված բոլոր թեմաների շուրջ անցկացվում են շահագրգիռ կողմերի քննարկումներ: Դրանց նպատակն է հասնել բոլորին բավարարող համաձայնության, որպեսզի կյանքի կոչել եռակողմ հայտարարությունը: «Այդ նպատակով մենք մշտական երկխոսության մեջ ենք հայկական եւ ադրբեջանական կողմերի հետ ինչպես ամենաբարձր, այնպես էլ Ռուսաստանի ՊՆ, ԱԳՆ եւ այլ գերատեսչությունների մակարդակով: Օգոստոսի 2-ին եւ 8-ին կայացել են ՌԴ նախագահ Վ. Ծ. Պուտինի եւ ՀՀ վարչապետ Ն. Վ. Փաշինյանի հեռախոսազրույցները: Հայ եւ ադրբեջանցի գործընկերների հետ շփումներ են անցկացրել Ս.Վ. Լավրովը եւ Ս.Կ. Շոյգուն: Պրոբլեմատիկայի զգայունությունը հաշվի առնելով՝ քննարկումների մանրամասները վեր չհանվեցին, այդուհանդերձ նման զրույցները համարվում են կարգավորման կարեւոր եւ գործուն գործիք»»:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆՈՐ ՕԳՆԱԿԱՆ

Երեւանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը նոր օգնական ունի: Գործակարգավարական խորհրդակցության ժամանակ այս մասին հայտնեց Երեւանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը: Երեւանը քաղաքապետի օգնական է նշանակվել Հովհաննես Նիկողոսյանը:

1913 ԴԵՊՔ

Հանրապետությունում օգոստոսի 15-21-ն ընկած ժամանակահատվածում կատարվել է 6523 թեստավորում, գրանցվել է կորոնավիրուսային հիվանդության 1913 նոր դեպք: ՀՀ առողջապահության նախարարությունը տեղեկացնում է, որ նշված ժամանակահատվածում գրանցվել է մահվան 5 դեպք: Վերջին 7 օրվա ընթացքում առողջացածների թիվը կազմում է 1663: Ներկայում բուժում է ստանում 2417 քաղաքացի: Հայաստանում, ընդհանուր առմամբ, համավարակի ժամանակահատվածում կատարվել է 3 մլն 178 հազար 333 թեստավորում, հաստատվել է կորոնավիրուսային հիվանդության 432 հազար 274 դեպք: Առողջացածների թիվը կազմում է 419 հազար 528, մահացել է 8 հազար 648 քաղաքացի:

ՄԵԿՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Օգոստոսի 21-ի երեկոյան ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը մեկնել է արտերկիր:

Ի՞նչ նպատակով է մեկնել եւ ինչպե՞ս է մեկնել՝ հաշվի առնելով, որ նրա նկատմաբ կա դատարանի կողմից սահմանված սահմանահատման արգելք. այս հարցերի պարզաբանման համար կայքը դիմել է ՀՀ երկրորդ նախագահի գրասենյակի համակարգող Բագրատ Միկոյանին:

Ի պատասխան՝ Միկոյանն ասել է. «Նախագահ Քոչարյանը նախօրեին մեկ շաբաթով մեկնել է Հայաստանից: Նախագահի փաստաբանական թիմը դիմել էր դատարանին՝ ստանալու մեկնելու թույլտվություն՝ օգտվելով այն հանգամանքից, որ նիստերի ընթացքում մեծ ընդմիջում կա մինչեւ սեպտեմբերի 20-ը: Դատարանը թույլ է տվել բացակայել Հայաստանից օգոստոսի 22-29-ը: Նախագահ Քոչարյանն օգտվել է այդ հնարավորությունից եւ մեկնել: Կվերադառնա օգոստոսի 29-ին»:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ՎԵԴԻԻ ՆԱԽԿԻՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ՝ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Վարուժան Բարսեղյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 1999-2021 թվականների ընթացքում զբաղեցրել է Արարատի մարզի Վեդի համայնքի ղեկավարի պաշտոնը, այսինքն՝ հանդիսանալով տեղական ինքնակառավարման մարմնում՝ համայնքապետարանում մշտապես կազմակերպական-տնօրինչական գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ, անցել է պաշտոնական լիազորությունները, այն է՝ դիտավորությամբ կատարել է այնպիսի գործողություններ, որոնք ակնհայտորեն դուրս են եկել նրա լիազորությունների շրջանակից եւ էական վնաս պատճառել անձանց իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության եւ պետության օրինական շահերին:

Այսպես, ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի ղեկավար Վարուժան Հակոբի Բարսեղյանը, նպատակ ունենալով ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի՝ թիվ 265-Ն որոշման Հավելվածի համաձայն՝ ՀՀ ընդհանուր օգտագործման հանրապետական նշանակության ավտոմոբիլային 3-10, /3-8/ /Ոսկետափ) /-Վեդի-Լանջառ-/Մ-2/ ճանապարհի հատված կազմող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում ընդգրկված ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի Արարատյան փողոցի 71/1, 71/2, 71/3 եւ 71/4 հասցեներում գտնվող համապատասխանաբար 18քմ եւ 20 քմ, 20քմ եւ 20 քմ չափերով հողամասերը կառուցապատման իրավունքով ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի բնակիչ Վազգեն Նազարյանին առեւտրի սրահ կառուցելու համար տրամադրելու, անտեսել է ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 920-Ն որոշման Հավելված 1-ի 24-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված պահանջն առ այն, որ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի գործառնական նշանակության փոփոխությունները համայնքի ղեկավարի

կողմից համաձայնեցվում են Լիազոր մարմնի /Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե/ հետ, ինչպես նաեւ 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2404-Ն որոշման 8-րդ կետով նախատեսված պահանջներն առ այն, որ հանրապետական նշանակության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին եւ դրանց հարող տարածքներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքաշինական նպատակներով հողօգտագործման վերաբերյալ առաջարկությունները, ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման եւ ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի համաձայնեցման գործառույթները համայնքի ղեկավարի կողմից իրականացվում են՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի հետ:

Այդ նպատակով Վարուժան Բարսեղյանը, առանց Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի հետ համաձայնեցնելու, ակնհայտորեն դուրս գալով իր լիազորությունների սահմաններից, 2020 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 514, 2019 թվականի նոյեմբերի 11-ին թիվ 615, 2021 թվականի փետրվարի 11-ի թիվ 110 որոշումներով, ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի Արարատյան փողոցի 71/1, 71/2, 71/3 եւ 71/4 հասցեներում գտնվող համապատասխանաբար 18քմ եւ 20 քմ, 20քմ եւ 20 քմ չափերով, բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողամասերի գործառնական նշանակությունը փոխել է բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերի: Բացի այդ, կրկին առանց Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի հետ համաձայնեցնելու, ակնհայտորեն դուրս գալով իր լիազորությունների սահմաններից, Վարուժան Բարսեղյանը ՀՀ Արարատի մարզի Վեդի քաղաքի Արարատյան փողոցի 71/1, 71/2, 71/3 եւ 71/4 հասցեներում առեւտրի սրահ կառուցելու համար 2019 թվականի հուլիսի 29-ին 2020 թվականի նոյեմբերի 13-ին Վազգեն Նազարյանին տրամադրել է թիվ 31 եւ թիվ 58 ճարտարապետահատակագծային առաջադրանքները, իսկ 2020 թվականի հունվարի 21-ին, 2020 թվականի դեկտեմբերի 23-ին Վազգեն Նազարյանին տրամադրել է թիվ 2, թիվ 678 շինարարության թույլտվությունները: Վեդի համայնքի ղեկավար Վարուժան Բարսեղյանի կողմից վերը նկարագրված՝ իր լիազորությունների շրջանակից ակնհայտորեն դուրս եկող գործողությունների կատարման արդյունքում անձանց իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության եւ պետության օրինական շահերին պատճառվել է էական վնաս. անձինք զրկվել են բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողամասերն ըստ նպատակային եւ գործառնական նշանակության օգտագործելու, հանրության շահերին ծառայեցնելու, հասարակության անվտանգության ապահովման, սոցիալ-տնտեսական զարգացման, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների եւ բնապահպանական հիմնահարցերի փոխկապակցված լուծման, քաղաքաշինական, լանդշաֆտային եւ բնապատկերային արժեքների պահպանման, բնական եւ տեխնածին երեւույթներից պաշտպանության, աղետների եւ արտակարգ իրավիճակների կանխման ու հետեւանքների վերացման հնարավորությունից:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչությունում իրականացված քննչական եւ վարութային մեծածավալ գործողությունների արդյունքում պարզվել են քաղաքական ընդդիմության «Դիմադրություն» շարժման կողմից կազմակերպված հավաքի ընթացքում 2022 թ. հունիսի 3-ին Երեւան քաղաքի Պռոշյան-Դեմիրճյան փողոցների խաչմերուկում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների դեպքի մի շարք հանգամանքներ:

Ինչպես հայտնում են Քննչական կոմիտեից, անհատականացվել են մասնակիցների գործողությունները. քրեական վարույթով մեղադրյալներից մեկի՝ քրեական վարույթի շրջանակներում հայտարարված հետախուզմամբ հայտնաբերված Գ.Սարգսյանի վերաբերյալ մասով նախաքննությունն ավարտվել է: Ավելի վաղ Քննչական կոմիտեն տեղեկացրել էր, որ շարժման ղեկավարների կազմակերպմամբ եւ ուղղորդմամբ՝ Երեւան քաղաքի Դեմիրճյան փողոցի ուղղությամբ դեպի ՀՀ Ազգային ժողով անցնելու համար հավաքի մասնակիցները Պռոշյան-Դեմիրճյան փողոցների խաչմերուկում, չենթարկվելով հասարակական կարգի պահպանությունն իրականացնող ոստիկանության աշխատակիցների օրինական պահանջներին, փորձել են ճեղքել ոստիկանական շղթան, քարերով, մետաղյա ձողերով, մուրճով, շշերով, ինչպես նաեւ այլ առարկաներով հարվածներ հասցրել իրենց ծառայողական պարտականություններն իրականացնող ոստիկաններին: Նշված զանգվածային անկարգություններում ներգրավված քաղաքացի Գ. Սարգսյանը հավաքված ամբոխի շարքերից նախ ձեռքերով հարվածել է պատնեշ կազմած ոստիկաններին, ապա բարձրադիր վայրից քար եւ շիշ է նետել նրանց ուղղությամբ:

Զանգվածային անկարգության մասնակիցների, այդ թվում՝ Գ. Սարգսյանի գործողությունների արդյունքում ոստիկանության մի շարք ծառայողներ ստացել են տարբեր ծանրության աստիճանի մարմնական վնասվածքներ: Ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ Գ. Սարգսյանին մեղադրանք է ներկայացվել՝ 2003 թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 2-րդ մասով, (որը համապատասխանում է 2022 թ.-ի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասին): Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Վերջինիս վերաբերյալ մասն անջատվել է առանձին վարույթում, նախաքննությունն ավարտվել է, եւ քրեական վարույթի նյութերն ուղարկվել են դատավարական ղեկավարում իրականացնող դատախազին՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու եւ դատարան ուղարկելու միջնորդությունից:

ԼՈՒՐԵՐ

ԼՐԱԳՐՈՂԻ ԱՆՎԱՆ ՏԱԿ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Լեւոն Մելքոնյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա, դեռեւս ինքնությունը չպարզված մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ եւ նրանց օժանդակությամբ, խմբի կազմում ուրիշի առանձնապես խոշոր չափերով գույքը հափշտակելու միասնական դիտավորությամբ, մեկը մյուսի գործողությունները գիտակցելով եւ փոխլրացնելով, միմյանց խորհուրդներ, ցուցումներ, տեղեկատվություն ու գործիքներ տալով եւ տրամադրելով, ինչպես նաեւ խոչընդոտները վերացնելով, հանցավոր ճանապարհով ֆինանսական միջոցներ ձեռք բերելու շահադիտական նպատակով, խաբեությամբ եւ վստահությունը չարաշահելու՝ խարդախության եղանակով 2020թ. օգոստոսի 1-ից մինչեւ 2021թ. սեպտեմբերի 4-ն ընկած ծամանակահատվածում տարբեր հեռախոսահամարներով հեռախոսակապ հաստատելով մի շարք ՀՀ քաղաքացիների հետ, հեռախոսազրույցի ժամանակ թաքցնելով իր իրական տվյալներն ու ներկայանալով իբրեւ լրագրող կամ որեւէ նախարարության աշխատակից կամ մտերիմ կամ որեւէ այլ մտացածին անձ, զորամասում ծառայող զինվորին գումար փոխանցելու պատրվակով իր կողմից հետագայում վերադարձնելու պայմանով, խեղաթյուրելով իրականությունը եւ հավատ ու վստահություն ներշնչելով, տարբեր անձանցից հափշտակել է առանձնապես խոշոր չափերով՝ 10807000 ՀՀ դրամ գումար, որից հետո այն մաս առ մաս փոխանցել է այլ հաշիվների՝նպատակ ունենալով թաքցնել հափշտակված գումարների հանցավոր ծագումն ու տեղաշարժը:

ԴԱՏԻ Է ՏՎԵԼ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Երեւանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը դատական հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Իշխան Սաղաթելյանի: Վերջինս պահանջում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 180.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու համար Իշ. Սաղաթելյանին վարչական պատասխանատվության ենթարկել: Ի՞նչ իրավախախտման մասին է խոսքը: Այսպիսով, ՀՀ օրենսգրքի 180.1-ին հոդվածի 1-ին մասը վերաբերում է հավաքներ անցկացնելու՝ օրենքով սահմանված կարգը խախտելուն: Առանց համայնքի ղեկավարին օրենքով սահմանված կարգով իրազեկելու կամ իրազեկման պայմանների խախտմամբ հավաք անցկացնելը առաջացնում է տուգանքի նշանակում հավաքի կազմակերպչի կամ ղեկավարի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչեւ երեքհարյուրապատիկի չափով, ասել է թե՝ Երեւանի քաղաքապետը հենց այս օրենքի խախտման համար է դիմել դատարան՝ ընդդեմ ԱԺ պատգամավորի: Գործը մակագրվել է Վարչական դատարանի դատավոր Դանիել Դանիելյանին:

Նյութերը՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 19-ից 22-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 143 դեպք, որոնցից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ԱՆՑԵԼ Է ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԱՓ

Իջեւան խոշորացված համայնքի սահմանամերձ Բերքաբեր գյուղի բնակչուհի, 1973 թվականին ծնված Ալվարդ Դիլբարյանը օգոստոսի 13-ին տնից դուրս է եկել եւ այլեւս չի վերադարձել: ՀՀ ոստիկանությունը հաղորդագրություն է տարածել նրա անհետանալու մասին: Բերքաբերի վարչական ղեկավար Տիգրան Հարությունյանից տեղեկացա, որ Ա. Դիլբարյանը եւ իր ամուսինը Բերքաբեր գյուղում զբաղվում են գյուղատնտեսությամբ, իրենց տնտեսությամբ, նրանք ունեն չափահաս երկու տղա, որոնք Բերքաբերում չեն ապրում: Ալվարդ Դիլբարյանը ծնունդով Իջեւան խոշորացված համայնքի Դիտավան գյուղից է, այնտեղից է հարս գնացել Բերքաբեր: Բերքաբերը գտնվում է ներկայումս հայ-ադրբեջանական փաստացի սահման հանդիսացող Ջողազի ջրամբարի աջ ափին, Բերքաբերի վարչական ղեկավարը բացառեց, որ Ալվարդ Դիլբարյանը կարող էր անցնել արհեստական լճի ձախ՝ ադրբեջանական ափը, որովհետեւ նա չէր կարող հաղթահարել ջրամբարը, կամ էլ անցնել ջրամբարի պատվարի վրայով, որի տարբեր կողմերին հայկական եւ ադրբեջանական զինուժի հենակետեր են տեղակայված: Բերքաբերի բնակիչները հայտնեցին, որ Ալվարդ Դիլբարյանը հոգեկան հիվանդ չէ, սակայն տարօրինակություն ունի. նա նախկինում մի քանի օրով իրենց տնից անհետացել է, հետո ետ վերադարձել: Օգոստոսի 12-ին տնից հեռանալիս Ա. Դիլբարյանի մոտ բջջային հեռախոս չի եղել, ինչը դժվարեցնում է նրան գտնելու գործը:

ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹՅՈՒՆ

2022թ. մայիսի 2-ից Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Բերդ քաղաքի նստավայրում, դատավոր Ջոյա Ջաքինյանի նախագահությամբ, ընթանում է Վահե Նորայրի Մարգարյանի դատավարությունը: Նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ 2021 թվականի նոյեմբերի 1-ից մինչեւ նոյեմբերի 2-ը գտնվելով Վրաստանի Հանրապետության Թբիլիսի քաղաքում՝ ձեռք է բերել պայթուցիկ նյութ հանդիսացող անծուխ վառոդի զանգվածներ, որոնք մաքսանենգությամբ՝ մաքսային հսկողությունից թաքցնելու եղանակով, ապօրինի տեղափոխել է Հայաստանի Հանրապետություն: Վ. Մարգարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 235.1 հոդվածի 1-ին մասով: Նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը: Այդ գործով մեղադրանքը դատարանում պաշտպանում է ՀՀ գլխավոր դատախազությունը: Սույն քրեական գործով մեղադրանքի շրջանակներում Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում, որպես իրեղեն ապացույցներ, պահվում են անծուխ վառոդի զանգվածներ՝ 5,08 կգ, 5,5 կգ, 1,02լգ եւ 1 կգ քաշով:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱ

ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ ԲԱՑԵԼ «ՓԵԹԱԿ»-Ը

«Փեթակ» առեւտրի կենտրոնի աշխատակիցները եւ տնտեսվարողները երեկ վաղ առավոտյան բողոքի ակցիա են իրականացրել: Լրագրողների հետ զրույցում նրանք նշեցին, որ ցանկանում են աշխատել, սակայն իրենց թույլ չեն տալիս:

«Տնօրինությանը հարցնում ենք՝ երբ ենք աշխատելու, ասում են՝ տեղեկություն չունենք, ասում են՝ վերեւներից պետք է ասեն. թե ովքեր են վերեւները, չեն նշում: Մենք խնդիրների առաջ ենք կանգնում, մեր աշխատողները արդեն սկսել են այլ աշխատանք փնտրել. մի ամսից որ բացվի, աշխատակիցների խնդիր ենք ունենալու, վարկեր, հարկեր ունենք վճարելու, ո՞վ է փոխհատուցելու այդ ամենը»,- ասաց տնտեսվարողներից մեկը:

Մեկ այլ տնտեսվարող նշեց, որ քիչ առաջ հանդիպել են ԱԻ նախարարի հետ եւ առաջարկել առեւտրի կենտրոն մտնող ճանապարհը պայմանականորեն կիսել:

«Մի հատվածում թող աշխատեն փրկարարները, իսկ մյուսը մենք կմաքրենք, կաշխատեցնենք, ոչ մի աշխատանքի մենք չենք խոչընդոտելու: Նախարարը տվել է իր համաձայնությունը ճանապարհը կիսելու վերաբերյալ: Հիմա ասում են՝ քննիչները պետք է թույլ տան: «Փեթակ» առեւտրի կենտրոնում ոչ մի վտանգ չկա, մտել նայել ենք, թող թողնեն աշխատենք, մարդիկ վարկեր ունեն, վճարումներ ունեն: Շրջակա բոլոր առեւտրի կենտրոնները աշխատում են, բացի «Փեթակից». այս ընթացքում կրել ենք ֆինանսական, տնտեսական վնասներ»,- ասաց «Փեթակ» առեւտրի կենտրոնի աշխատակիցներից մեկը: Անհատ ձեռներեց Սարգիս Ղազարյանի խոսքով՝ ԱԻ փոխնախարարը հայտնել է, որ ԱԻՆ-ի փրկարարները «Սուրմալու» առեւտրի կենտրոնի հատվածի ճանապարհին իրենց հսկողության տակ կվերցնեն:

«Ութ օր է՝ քննչականն էլ, հետաքննիչն էլ աշխատել են: «Փեթակ» առեւտրի կենտրոնը կապ չունի այդ թեւի հետ: Փլված շենքի հետեւը բոլորն առեւտուր են անում: Ժողովուրդը վարկեր ունի: Տոնավաճառի տնօրինությունը անվտանգային պայմանները ստեղծել է: Եթե անվտանգությունը չպահենք, ինչպես կարող ենք ասել, որ ժողովուրդը աշխատի»,- ասաց նա: Անհատ ձեռներեցը նշեց, որ առեւտրի կենտրոնի փակ լինելու պատճառով տնտեսվարողները ֆինանսական վնասներ են կրում:

«Մարդիկ կան, որոնք օրական 5000 դրամ աշխատում են, տանում են իրենց ընտանիքն են պահում: «Փեթակ»-ի դիմացի մայթի ճանապարհը թող մնա իրենց, որ տեխնիկաները աշխատեն, իսկ այս մայթինը թող բացվի, որ մենք էլ կարողանանք աշխատել: Մեզ ասում են, որ սպասում են քննիչների պատասխանին, քննիչն էլ՝ վերադասի պատասխանին»,- ասաց նա:

Սարգիս Ղազարյանը պատմեց, որ «Սուրմալու» առեւտրի կենտրոնում տեղի ունեցած ողբերգական պայթյունի հետեւանքով Հայաստանում եւ Արցախում հայտարարված սգո օրերին փակ է եղել միայն «Փեթակ» առեւտրի կենտրոնը. «Հայաստանում սգո օրեր էին հայտարարված, Հայաստանում չենք աշխատել միայն մենք, բոլորը աշխատել են, աշխատել են նաեւ զվարճանքի վայրերը: Մեր սիրտը ցավում է դրանից, բայց պետք է ժողովուրդն էլ ապրի, չէ՞»:

Այս իրավիճակին անդրադարձել է նաեւ ԱԻՆ խոսնակ Հայկ Կոստանյանը: ««Փեթակ» առեւտրի կենտրոնի տնտեսվարողները պահանջում են հստակ օր հայտարարել, թե երբ կարող են վերադառնալ աշխատանքի: Որոշումը կայացնելուց հետո հայտարարություն կտարածվի»,-գրել է նա:

Նշենք, որ «Փեթակ»-ը փակ է օգոստոսի 14-ից, երբ հարեւանությամբ գտնվող «Սուրմալու» առեւտրի կենտրոնի ողբերգական պայթյունը տեղի ունեցավ: Ըստ իրավապահների՝ հարակից խանութները փակ են՝ քաղաքացիների անվտանգությունից ելնելով:

Հիշեցնենք, որ «Սուրմալու» առեւտրի կենտրոնում օգոստոսի 14-ին տեղի է ունեցել ուժեղ պայթյուն, ինչի հետեւանքով կա 16 զոհ: Անհետ կորած է համարվում 1 քաղաքացի: Տուժածների ընդհանուր թիվը 61 է: Տարբեր հիվանդանոցներում բուժումը շարունակում է 3 տուժած, նրանց առողջական վիճակը գնահատվում է բավարար: Մյուս հոսպիտալացվածները վիճակի դրական դինամիկայով դուրս են գրվել: Պայթյունի դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ ՔՕ 357-րդ հոդվածի 2-րդ մասի (Հրդեհային անվտանգության կանոնները կամ պահանջները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետեւանք) եւ 358-րդ հոդվածի 2-րդ մասի (Դյուրավառ կամ այրիչ նյութերի պահպանման, հաշվառման, փոխադրման, առաքման կամ օգտագործման կանոնները կամ պահանջները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետեւանք) հատկանիշներով:

ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՏԵՂՅԱԿ ՉԵՆ

Լուսինե Հովհաննիսյանը շուրջ մեկ տարի զբաղեցնում է Նոյեմբերյանի թիվ 2 հիմնական դպրոցի տնօրենի պաշտոնը:

Նա հուլիսի 1-ին աշխատանքից ազատել է դպրոցի բազմավաստակ 7 մանկավարժների՝ պատճաբանելով, որ նրանք կենսաթոշակային տարիքի են, մինչդեռ կենսաթոշակային տարիքի ուսուցիչներին աշխատանքից ազատելու օրենք, իմպերատիվ պահանջ չկա: Դպրոցի տնօրենը աշխատանքից ազատված ուսուցիչներին հորդորել է աշխատանքից ազատման դիմումներ գրել, սակայն 7-ից միայն 2-ն են դիմում են գրել, եւ դրա հետեւանքով նրանցից մեկի առողջական վիճակը վատացել է: Աշխատանքից ազատված աշխատակիցներն ասում են, որ տնօրենը կենսաթոշակային տարիքի ուսուցիչներին աշխատանքի ազատելիս գործել է առանց սկզբունքի, խտրական ձեւով, թիվ 2 հիմնական դպրոցից աշխատանքից չեն ազատվել կենսաթոշակային տարիքի այլ ուսուցիչներ, որոնք նոր ուսումնական տարում կդասավանդեն: Նոյեմբերյանի թիվ 2 հիմնական դպրոցից հայտնեցին, որ այդ դպրոցում անցած ուսումնական տարում անօրինական կերպով գործել է բուֆետ, որպես բուֆետապան աշխատել է դպրոցի պահակը, վերադասից աշխատող ժամանելու դեպքում բուֆետը հապշտապ փակել են: Տեխնոլոգիայի, գծագրության եւ նկարչության ուսուցչուհի Արեւ Բեջանյանին տնօրենն աշխատանքից ազատել է պայմանագրի ժամկետը լրանալուց ավելի վաղ՝ հունիսի 30-ի հրամանով, սակայն այդ մասին Ա. Բեջանյանին օրենքով սահմանված կարգով չի ծանուցել: Վերջինս այդ մասին պատահական կերպով է իմացել, երբ ուսուցիչների մեթոդական միավորման ֆեյսբուքյան խմբից հեռացված է տեսել իր անունը: Ա. Բեջայանը կարծում է, որ դպրոցի տնօրենն աշխատանքից ազատելու մասին սահմանված կարգով իրեն չի հայտնել, որպեսզի սպառվի տնօրենի հրամանը բողոքարկելու համար օրենքով սահմանված ժամկետը: Ա. Բեջանյանը փաստաբան ունի, դատական կարգով վիճարկելու է իրեն աշխատանքից ազատելու մասին դպրոցի տնօրենի հրամանի օրինաչափությունը: Ջանգահարեցի Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Մերուժան Հարությունյանին, հարցրի, թե ինքը տեղյակ է արդյոք, թե ինչ անօրինակություններ են կատարվել Նոյեմբերյանի թիվ 2 հիմնական դպրոցում: Մ. Հարությունյանը հայտնեց, որ ինքը գտնվում է արձակուրդում, արձակուրդից կվերադառնա նոր ուսումնական տարվա մեկնարկից 2 օր առաջ, ինքը տեղյակ չէ, թե ինչ խնդիրներ կան Նոյեմբերյան քաղաքի թիվ 2 հիմնական դպրոցում, եւ հորդորեց այդ խնդիրների վերաբերյալ գրավոր հարցում ուղարկել Տավուշի մարզպետին:

Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

● Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 39 ՃՏՊ. 2 մարդ զոհվել է, 65-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ(1)

2022 թվականի սեպտեմբերի 2-ին՝ ժամը 12:00-ին, Չարենցավանի համայնքապետարանի նիստերի դահլիճում կկայանա «Հովթեր» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող «Արգել ՓՀԷԿ»-ի կառուցման եւ շահագործման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ առաջին հանրային քննարկումը: Փաստաթղթերին ծանոթանալու համար զանգահարել 098 57 77 77 հեռախոսահամարով:

ՍՊՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՍՏ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկված մարզաձեւերի ՀՀ հավաքական թիմերի գլխավոր, ավագ, երկրորդ եւ անձնական մարզիչներին սպորտային նպաստ կհատկացվի:

Սպորտային նպաստի շահառուներ հանդիսանում են օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկված մարզաձեւերի ՀՀ հավաքականների անդամ հանդիսացող այն մարզիկները, որոնք 2021 թվականի օլիմպիական խաղերում, 2021 կամ 2022 կամ 2023 թվականների աշխարհի կամ Եվրոպայի մեծահասակների առաջնություններում գրավել են մրցանակային տեղեր:

Բացի այս, սպորտային նպաստ կստանան նրանք, որոնք ձեռք են բերել 2024 թվականի Փարիզի 33-րդ ամառային օլիմպիական խաղերի մասնակցության վարկանիշ, երիտասարդների աշխարհի կամ Եվրոպայի 2021 կամ 2022 կամ 2023 թվականների առաջնություններում գրավել են մրցանակային տեղեր, օլիմպիական խաղերում կամ աշխարհի մեծահասակների առաջնություններում 2021 կամ 2022 կամ 2023 թվականներին գրավել են 4-8-րդ տեղերը:

Ի դեպ, շահառուներին սպորտային նպաստ կտրամադրվի 2022 թվականից մինչեւ օլիմպիական խաղերի ավարտը՝ յուրաքանչյուր ամիս, ընդ որում՝ մարզիկներին՝ իրենց մեկ լավագույն արդյունքի համար, մարզիչներին՝ ֆեդերացիաներում իրենց զբաղեցրած մեկ պաշտոնի համար, անձնական մարզչին՝ մարզիկի կատարած մեկ լավագույն նվաճման համար:

Նշենք, որ 2022 թվականի հունիսի 1-ից սպորտային նպաստ տրամադրվում է յուրաքանչյուր ամիս հետեւյալ չափով՝ մարզիկներ (մեծահասակներ)՝ 2021 թվականի օլիմպիական խաղեր 2-րդ տեղ՝ 500 հազար դրամ, 3-րդ տեղ՝ 400 հազար դրամ, իսկ օլիմպիական խաղերի վարկանիշ ունեցողները՝ 300 հազար դրամ, աշխարհի մեծահասակների առաջնության 1-ին տեղ գրավածը՝ 500 հազար դրամ, 2-րդ տեղ՝ 400 հազար դրամ, 3-րդ տեղ՝ 300 հազար դրամ: Գլխավոր մարզիչը ստանում է 350 հազար դրամ, երկրորդ մարզիչը՝ 250 հազար դրամ, անձնական մարզիչը՝ 250 հազար դրամ, բժիշկը՝ 250 հազար դրամ, մերսողը՝250 հազար դրամ:

ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

«Վեոլիա Ջուր» Գ

ՍԱԿԱԳՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

«Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունը (Հայաստանի Հանրապետություն, ք. Երեւան, Աբովյան 66ա), համաձայն «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա տրամադրելու մասին» N 397Ա որոշմամբ հաստատված Լիցենզիայի պայմանների N3 հավելվածի, մտադիր է դիմել Հայաստանի Հանրապետության Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝ իր կողմից սպասարկվող տարածքում խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների վերանայման հայտով:

Գործող սակագներ՝

● ՀՀ կառավարության 2016թ. նոյեմբերի 3-ի N1122-Ն որոշման համաձայն՝ սոցիալապես անապահով ընտանիք համարվող բաժանորդներին մանրածախ խմելու ջրի մատակարարման ծառայության մատուցման սակագինը յուրաքանչյուր 1 խ.մ. դիմաց՝ 153 դրամ (ներառյալ ԱԱՀ),

● ՀՀ կառավարության 2016թ. նոյեմբերի 3-ի N1122-Ն որոշման համաձայն սոցիալապես անապահով ընտանիք համարվող բաժանորդներին մանրածախ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայության մատուցման սակագինը յուրաքանչյուր 1 խ.մ. դիմաց՝ 27 դրամ (ներառյալ ԱԱՀ),

● մյուս բաժանորդներին (առանց սոցիալապես անապահով ընտանիք համարվող բաժանորդների) մանրածախ խմելու ջրի մատակարարման ծառայության մատուցման սակագինը յուրաքանչյուր 1 խ.մ. դիմաց՝ 170.4 դրամ (ներառյալ ԱԱՀ),

● մյուս բաժանորդներին (առանց սոցիալապես անապահով ընտանիք համարվող բաժանորդների) մանրածախ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայության մատուցման սակագինը յուրաքանչյուր 1 խ.մ. դիմաց՝30.07 դրամ (ներառյալ ԱԱՀ),

● մեծածախ խմելու ջրի մատակարարման ծառայության մատուցման սակագինը յուրաքանչյուր 1 խ.մ. դիմաց՝ 39.811 դրամ (ներառյալ ԱԱՀ),

● մեծածախ ջրահեռացման ծառայության մատուցման սակագինը յուրաքանչյուր 1 խ.մ. դիմաց՝ 19.906 դրամ (ներառյալ ԱԱՀ),

● «Կարեն Դեմիրճյանի անվան Երեւանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության ստորգետնյա ջրերի հեռացման ծառայության մատուցման սակագինը յուրաքանչյուր 1 խ.մ. դիմաց՝ 11.267 դրամ (ներառյալ ԱԱՀ):

Առաջարկվող սակագներ՝

● մանրածախ խմելու ջրի մատակարարման ծառայության մատուցման սակագինը յուրաքանչյուր 1 խ.մ. դիմաց՝ 177.653 դրամ (ներառյալ ԱԱՀ),

● մանրածախ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայության մատուցման սակագինը յուրաքանչյուր 1 խ.մ. դիմաց՝ 31.350 դրամ (ներառյալ ԱԱՀ),

● մեծածախ խմելու ջրի մատակարարման ծառայության մատուցման սակագինը յուրաքանչյուր 1 խ.մ. դիմաց՝ 41.801 դրամ (ներառյալ ԱԱՀ),

● մեծածախ ջրահեռացման ծառայության մատուցման սակագինը յուրաքանչյուր 1 խ.մ. դիմաց՝ 20.900 դրամ (ներառյալ ԱԱՀ),

● «Կարեն Դեմիրճյանի անվան Երեւանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության ստորգետնյա ջրերի հեռացման ծառայության մատուցման սակագինը յուրաքանչյուր 1 խ.մ. դիմաց՝ 12.294 դրամ (ներառյալ ԱԱՀ):

Սակագնի ճշգրտումն իրականացվել է՝ համաձայն Լիցենզիայի պայմանների N3 հավելվածով սահմանված գործոնների, եւ մանրածախ ջրամատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) գումարային 209.0 դրամ/խմ (ներառյալ ԱԱՀ-ն) սակագնի ձեւավորման մեջ էական ազդեցություն է ունեցել արձանագրված 8.3% սղաճը, որով պայմանավորված՝ ճշգրտման մեծությունը կազմել է 23.51 դրամ/խմ (ներառյալ ԱԱՀ-ն): Գործոնային ազդեցություններն են՝

⇩

Բազիսային սակագին 2023թ. համար	183.6 դրամ/խմ
Մանրածախ ջրամատակարարման ծավալների փոփոխություն	-1.74 դրամ/խմ
Սղաճ	+23.51 դրամ/խմ
Էլեկտրաէներգիայի սակագների փոփոխություն	+3.89 դրամ/խմ
Այլ եկամուտներ	-0.26 դրամ/խմ
Ընդամենը գումարային սակագին	**209.0 դրամ/խմ**

Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Աբովյան 66ա, հեռ.՝ 011 59-03-81, էլ. փոստ՝ am.water.office.all@veolia.com:

Գլխավոր տնօրեն՝Մ. Շահինյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Գ

Հայտարարություն (2)

Գայանե Անաստասի Սարգսյանի աճուրդի կազմակերպման եւ անցկացման մասին

2022թ. սեպտեմբերի 8-ին, ժամը 11:30-ին Գայանե Անաստասի Սարգսյանի սնանկության գործով կառավարիչ Արմենակ Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց 5, 311 սենյակ հասցեում կանցկացվի Գայանե Սարգսյանի պարտավորություններ համար <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ում գրավադրված սեփականության իրավունքով Անաստաս Սարգսյանին պատկանող՝

Լոտ-1. ՀՀ քաղաք Երեւան Մալաթիա Ս.Օհանովի փողոց 12 շենք 26 հասցեում գտվող անշարժ գույքի աճուրդային վաճառքը:

Անշարժ գույքը գտնվում է 9 հարկանի շենքի 9-րդ հարկում, բնակարանի մակերես 55.6 քմ է, առաստաղի բարձրությունը 2.8 մետր, պատուհանները մետաղալաստ են, հատակը մանրատախտակ, ունի ջրամատակարարում, գազամատակակարում, էլեկտրամատակարարում:

Աճուրդի մեկնարկային գինը սահմանվում է 18 711 000 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումը հաստատող փաստաթղթեր:

Ֆիզիկական անձի դեպքում անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձի եւ Ա/Ձ-ի դեպքում պետական գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենը.

աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումը հաստատող փաստաթղթեր:

Մասնակցության վճարը կազմում է 200 000 ՀՀ դրամ

Նախավճարը կազմում է տվյալ լոտի մեկնարկային գնի 5%-ը:

Աճուրդի մասնակցության վճարը եւ նախավճարը վճարվում են Գայանե Սարգսյանի սնանկության հատուկ հաշվին՝ <<Արդշինբանկ>> ՓԲԸ-ի <<Էրեբունի>> մասնաճյուղ 2472302882650130 հաշվեհամարին մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ը կարող են հայտ ներկայացնել Սնանկության դատարանի շենքում /ք. Երեւան, Օտյան 53/2/:

Աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտը ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ դիմելով կառավարիչ Արմենակ Էլոյանին /հեռ.094 411 487/:

Հայտարարություն (3)

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի/21.06.2014թ. ՀՕ-110-Ն/,ինչպես նաեւ ՀՀ կառավարության 19.11.2014 թ. N1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2022թ. սեպտեմբերի 7-ին ժամը 11:00-ին Մասիս համայնքի Նորամարգ բնակավայրի վարչական շենքում տեղի կունենա «ԱՐ ՖԻՇ» ՍՊԸ-ի ՀՀ Արարատի մարզի Նորամարգի ձկնաբուծական տնտեսության համար նախատեսված ավազանների կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի հանրային քննարկումներ/1-ին հանրային քննարկում/:Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ, ք. Եղեգնաձոր Գլաձորյան 2 նրբ. տ. 19, հեռ.՝ 094402122,093230055:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ԿՈՆՖԼԻԿՏԱՅԻՆ ՏԵՍԱՐԱՆ

Դ. ԱՖՐԻԿՅԱՆԸ՝ ՍՈՖԻ ՄԽԵՅԱՆԻ ՀԵՏ ՍԻՐԱՎԵՊԻ ՄԱՍԻՆ

«Սերը թակարդում» հեռուստասերիալի գլխավոր դերակատար Դավիթ Աֆրիկյանը ArmLur.am-ի հետ զրույցում պատմել է առաջիկա անելիքների եւ սիրավեպերի մասին:

«Այս պահին հիմնականում զբաղված եմ «Սերը թակարդում» հեռուստասերիալի նկարահանումներով, բայց շուտով նորություն կունենամ, քանի որ առաջարկ ունեմ գեղարվեստական ֆիլմում նկարահանվելու, այժմ նախապատրաստական աշխատանքների ընթացքի մեջ ենք: Մարմնավորելու եմ ֆիլմի գլխավոր հերոսին, եւ հույս ունեմ, որ այն եւս կսիրվի հանդիսատեսի կողմից»,-նշեց դերասանը:

Անդրադառնալով քննադատություններին եւ լայն ճանաչում ձեռք բերելուն՝ Դավիթ Աֆրիկյանն անկեղծորեն ասաց, որ բոլոր նախագծերն ինչ-որ ձեւով նպաստել են, որպեսզի ճանաչում ձեռք բերի, բայց առավել ազդել է մի քանի տարի առաջ տեղի ունեցած հաղորդման շրջանակներում կոնֆլիկտային տեսարանը, ինչը ավելի մեծ բում արեց, քան ամբողջ հաղորդումը:

«Ես անկեղծ կլինեմ. երբեք ցանկություն չեմ ունեցել հայտնի դառնալու, կամ ինձ ողջ աշխարհը ճանաչի, բացարձակ. ինչքան ինձ քիչ մարդ ճանաչի, այնքան ես ավելի հանգիստ կլինեմ եւ կկարողանամ ապրել անկաշկանդ: Ես կոմպլեքսավորվում եմ, չեմ կարողանում ազատ նստել, տեղաշարժվել, քանի որ դու արդեն հանրային մարդ ես»,-նկատեց նա:

Իսկ ինչ վերաբերվում է սիրային թեմաներին, Դավիթ Աֆրիկյանը նշեց, որ անձնական թեմաներին վերաբերող հարցերի մասին խոսել չի ցանկանում:

«Իհարկե, ինձ եւ Սոֆի Մխեյանին վերաբերող բոլոր մեկնաբանությունները տեսել եմ, կարդացել եմ, բայց դե, դա անձնական թեմա է եւ թող մնա անձնական, թող, ինչքան ուզում են, խոսեն, իրենց կարծիքը հայտնեն, վատ բան չեն ասում, բայց դե իրականում ինչ է՝ ես ու Սոֆին գիտենք»,-հավելեց մեր զրուցակիցը:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՎԱՆԱՁՈՐ

ՀՈԳԵՎՈՐ ՖԻԼՄԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ

Վանաձորի ՀԱԵ Գուգարաց թեմի առաջնորդարանի բակում օգոստոսի 19-ին տեղի ունեցած համերգով մեկնարկեց «Ֆրեսկո» արդի արվեստի եւ հոգեւոր ֆիլմերի 9-րդ միջազգային փառատոնը:

Համերգային ծրագրով հանդես է եկել Վանաձորի կամերային երգչախումբը եւ «Ադանա Փրոջեքթ» ռոք խումբը: Նմանը չունեցող համերգային ծրագիրն իր շուրջն էր հավաքել Վանաձորի արվեստասեր հասարակությանը: Ներկաները հնարավորություն ունեցան մասնակիցը լինելու արդեն իսկ սիրված փառատոնին:

«Թվով արդեն 9-րդ անգամ փորձում ենք հնարավորինս անել, նորովի ներկայացնել փառատոնը, հասարակությանը բոլոր հարթակներում հաղորդակից դարձնել մշակույթին, դառնալ կամուրջ արվեստի, հասարակության եւ ներառականության միջեւ: Մեր գերնպատակներից մեկն է ակտիվացնել մարզային մշակութային կյանքը »,- նշել է փառատոնի հիմնադիր նախագահ Շահեն Նազարենկոն:

Ի դեպ, այս օրերին Վանաձորում մշակութային ակտիվության պակաս չի լինի. փառատոնի շրջանակում նախատեսվում է իրականացնել ֆիլմերի դիտում-քննարկումներ, ազգային պարերին նվիրված միջոցառում եւ համերգային ծրագրեր:

Այս տարի փառատոնի շրջանակում Վանաձորի «Ծիծեռնակ» ճամբարում կիրականացվի ներառական մշակութային ճամբար, որին կմասնակցեն «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի եւ այլ մասնագիտացված կառույցների սաներ:

Փառատոնն իրականացվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ: Փառատոնին աջակցում են նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, «Ֆորմիկա Արտ» փրոդաքշնը, ՀԵՀԵՄ գրասենյակը եւ «Ծիածան» սոցիալական հասարակական կազմակերպությունը:

Լ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

6-ՐԴ ՏԵՂՈՒՄ Է

Հայաստանի շախմատի տղամարդկանց թիմի նախկին ադամ Լեւոն Արոնյանը ավարտեց մրցելույթները FTX Crypto Cup արագ շախմատի մրցաշարում: Արագ շախմատի առցանց մրցաշարի վերջին տուրում հայ գրոսմայստերի մրցակիցը Ֆրանսիան ներկայացնող Ալիռեզա Ֆիրուզան էր: 4 պարտիաների արդյունքում Արոյանը զիջեց 1,5-2,5 հաշվով: Մրցաշարի հաղթող դարձավ աշխարհի չեմպիոն Մագնուս Կարլսենը: Արոնյանը միայն 6-րդն տեղում է: Արագ շախմատի այս մրցաշարը բաղկացած էր 7 տուրից, իսկ մրցանակային ֆոնդը կազմում էր 210 հազար ԱՄՆ դոլար:

«ՖՐԱՆԿՖՈՒՐՏ»-«ՔՅՈԼՆ»

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի կիսապաշտպան Սարգիս Ադամյանը մասնակցել է «Ֆրանկֆուրտ»-«Քյոլն» հանդիպմանը: Գերմանիայի ֆուտբոլի առաջնության՝ Բունդեսլիգայի 3-րդ տուրում «Քյոլնն» արտագնա խաղում մրցել է «Ֆրանկֆուրտի» հետ: Հանդիպումն ավարտվել է ոչ-ոքի՝1:1 հաշվով: Հայաստանի ֆուտբոլի ազգային ընտրանու անդամ Սարգիս Ադամյանը «Քյոլնի» մեկնարկային կազմում էր, սակայն փոխարինվել է 56-րդ րոպեին: Այս տուրից հետո «Քյոլնը» մրցաշարային աղյուսակում 8-րդն է: Առաջատարը Մյունխենի «Բավարիան» է:

ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԵՐԿԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ Է

Հայաստանի ֆուտբոլի առաջնության 4-րդ տուրից հետո մրցաշարային աղյուսակում երկիշխանություն է: ֆուտբոլի առաջնության Պրեմիեր լիգայի 4-րդ տուրում հաղթանակ տոնեցին «Վանը» եւ «Ուրարտուն»: Մյուս հանդիպումներն ավարտվեցին ոչ-ոքի հաշվով: Այժմ մրցաշարային աղյուսակում առաջատարները երկու թիմեր են՝ «Ալաշկերտը» եւ «Վանը», որոնք ունեն 10-ական միավոր: Երրորդ տեղում 9 միավորով «Ուրարտուն» է: 4-ական միավոր ունեն «Արարատ-Արմենիան», «Շիրակը», «Արարատը» եւ «Լեռնային Արցախը»: 3-ական միավոր են հավաքել ԲԿՄԱ-ն եւ «Փյունիկը», եւ մեկ միավորով մրցաշարային աղյուսակի հետնապահն է «Նոան»: Հայաստանի առաջնության 5-րդ տուրի խաղերը կկայանան օգոստոսի 26-30-ը:

ԹԵՆԻՍԻ 152-ՐԴ ՌԱԿԵՏ

Աշխարհի թենիսի 152-րդ ռակետը դարձավ Ցինցինատիի «Մաստերս» մրցաշարի հաղթող: Ցինցինատիի մրցաշարի տղամարդկանց մենախաղերի եզրափակիչում մրցեցին հույն Ստեֆանոս Ցիցիպասը եւ խորվաթ Բորնա Չորիչը: 1 ժամ 58 րոպե ձգված մրցախաղում Ցիցիպասը 6: 7, 2:6 հաշվով զիջեց երկու սեթում:

Առաջին անգամ «Մաստերս» կարգի այս մրցաշարը կայացել է 1899 թվականին: Այն դասվում է թենիսի «Մաստերս 1000» կարգի մրցաշարերիշարքին:

● *Օգոստոսի 27-ին Երեւանի գեղասահքի եւ հոկեյի մարզադպրոցում տեղի կունենա «Զյունե թագուհին» մյուզիքլը: Տոմսերի արժեքը՝6000-30.000 դրամ: Սկիզբը՝ժանը 19:30-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՀԱՐՑ. Ովքե՞ր եւ ե՞րբ կարող են անվճար այցելել թանգարաններ:

Մարիամ Մեջլումյան (19 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությամբ գործող թանգարանների մշտական ցուցադրությունների անվճար այցելության արտոնություններ են սահմանված թանգարանային աշխատողների, պետական պաշտոնական պատվիրակությունների, մշակույթի ժառանգության բնագավառի ուսանողների, ժամկետային զինծառայողների, ՀՀ ստեղծագործական միությունների անդամների, լրագրողների (տեղեկույթ ստանալու կամ լուսաբանելու նպատակով), նախադպրոցական տարիքի երեխաների համար աշխատանքային բոլոր օրերին, (այցելուի կամ խմբի ղեկավարի կարգավիճակը հաստատող փաստաթղթի առկայությունը եւ թանգարանի կողմից դրանց պահպանությունը պարտադիր է), իսկ մյուս բոլոր այցելուների համար թանգարաններ այցելությունն անվճար է յուրաքանչյուր ամսվա վերջին շաբաթ օրը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծումն իրականացվում է՝ ՀՀ կառավարության 2007 թ. հունիսի 1-ի N 827-Ն որոշման պահանջների համաձայն: Մշակութային արժեքներ ժամանակավոր ներմուծելիս հայտատուն մաքսային մարմին պետք է ներկայացնի հայտարարագիր, մշակութային արժեքներն ու դրանց լուսանկարները /3 օրինակ/: Մաքսային մարմնում համապատասխան ընթացակարգով ձեւակերպվում է մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծումը՝ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով:

Էջը՝ ՆԱԻՐԻԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Որտե՞ղ պետք է դիմի խաղաքաղաքացին ընտանեկան նպաստ, սոցիալական նպաստ եւ հրատապ օգնություն ստանալու համար:

Ռիտա Աղաբեկյան (24 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Իրեն անապահով համարող ընտանիքի չափահաս անդամներից մեկը, մյուս չափահաս անդամների գրավոր համաձայնությամբ, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվելու նպատակով դիմում է փաստացի բնակության վայրի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (բաժին)՝ներկայացնելով դիմում-հայտարարագիր, ընտանիքի անապահովության միավորը հաշվարկելու համար իր ընտանիքի անապահովության բնութագրիչների մասին ամբողջական տվյալները հավաստող փաստաթղթեր:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պետական նպաստի իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, Հայաստանի Հանրապետությունում բնակվող եւ բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք՝ օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Հանգանակության արկղը դրված է Հանրապետության հրապարակի մասնաճյուղում: Փաստորեն, Զինծառայողների ապահովագրության հիմնադրամը նման վատ վիճակում է, երբ 10, 20 դրամները եւ 1-դոլարանոցն են դարձել զինվորի հույսը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **22.08.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: